Ծախսեր, հազ. Դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	10700.0	13200.0	+2500.0	1. Ձեռք է բերվել 400,0հազ.դրամ դիզ.վառելիք և 340,0հազ.դրամ ավտոպահեստամա սեր 2. Կատարվել է էքսկավատորի սպասարկման ծառայություն՝ 560,0հազ.դրամ և զնվել է ավտոդողեր՝ 1200,0հազ.դրամ

Ոլորտ 6. Տրանսպորտ					
Ծրագիր 3. Թումանյան քաղաքի փողոցների փոսային նորոգումներ և Կենտրոնական փողոցի հատվածի ցանկապատում					
Բնակավայրը՝ ք.Թումանյան					
Արդյունքային ցուցանիշները		2022 թ., տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանությո ւն

Մուտքային	Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ	1			Համայնքի ավագանու լուծարման պատճառով համայնքի բյուջեում չի կատարվել համապատասխան փոփոխություն, որի պատճառով չի կատարվել Թումանյան քաղաքի փողոցների փոսային նորոգումները և Կենտրոնական փողոցի հատվածի ցանկապատումը: Ծրագրի իրականացման աշխատանքները իրականացումը տեղափոխվել է 2021թ.
	Նախագծանախահաշվային փաստաթղթեր	1			
Ելքային (քանակական)	Բարեկարգված փողոցների մակերեսը, ք.մ	220			
	Բարեկարգված փողոցների երկարությունը, մետր	900			
Ելքային (որակական)	Բնակիչների կարծիքը բարեկարգված փողոցների վերաբերյալ	5 – միջին՝ ոչ լավ. ոչ վատ			
Ելքային (ժամկետայնություն)	Ծրագրի իրականացման ժամկետը, ամիս	2			
Վերջնական արդյունքի	Թումանյան քաղաքի փողոցները դարձել են անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին, %	40			
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	800.0			
Ծրագիր 4. Թումանյան քաղաքի 15-րդ փողոցի հարակից տարածքում կանգառի կառուցում Բնակավայրը՝ ք.Թումանյան					

Արդյունքային ցուցանիշները		2022 թ., տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. Արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	«Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տեխնիկա, գույք և աշխատակազմ	ըստ հաստիքներ ի և գույքագրման ցուցակի	ըստ հաստիքներ ի և գույքագրման ցուցակի		
Ելքային (քանակական)	Կանգառների քանակը, հատ	7	8		
	Կառուցված նոր կանգառների քանակը,	1	1		
Ելքային (որակական)	Բնակիչների կարծիքը կառուցված կանգառների վերաբերյալ	5 – միջին՝ ոչ լավ. ոչ վատ	լավ		Բնակիչների կարծիքը կառուցված կանգառների վերաբերյալ հարցումների հիման վրա եղել է լավ
Ելքային (ժամկետայնություն)	Ծրագրի իրականացման ժամկետը, ամիս	1	1		
Վերջնական արդյունքի	Թումանյան համայնքում բնակիչներին ծառայությունների որակի բարձրացում, %	40	40		
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ, հազ. դրամ	951,6	895,0	-56,6	Գնանշման հարցման արդյունքում տնտեսվել է 56,6 հազ. դրամ

Ոլորտ 8. Կրթություն					
Ծրագիր 1. Համայնքում նախադպրոցական կրթության ապահովում և ընդլայնում					
Բնակավայրերը՝ Թումանյան, Լորուտ, Քարինջ, Աթան, Ահնիձոր, Մարց, Շամուտ, Դսեղ, Չկալով					
Արդյունքային ցուցանիշները		2022 թ., տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների աշխատակազմեր	29	29		
	ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների շենքեր և գույք	ըստ գույքագրման ցուցակի	ըստ գույքագրման ցուցակի		
Ելքային (քանակական)	ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների աշխատակիցների թիվը	29	29		
	ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների դաստիարակների	14	16	+2	

	թիվը				
	ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների խմբերի թիվը	8	8		
	ՆՈՒՀ ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների թիվը	121	54	-67	Կորոնավիրուսի պատճառով <<ՆՈՒՀ>>-ի երեխաները հաճախել են ոչ լիարժեք
	Մեկ երեխայի հաշվով սննդի օրական ծախսերը, դրամ	180	180		
Ելքային (որակական)	Մատուցվող ծառայության համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, սահմանված նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին	ամբողջությամբ	Ամբողջությամբ		
Ելքային (ժամկետայնության)	Նախադպրոցական կրթության ծառայության մատուցման օրերի թիվը տարվա ընթացքում	229	60	-169	Կորոնավիրուսի պատճառով <<ՆՈՒՀ>>-ի ծառայության մատուցման օրերի թիվը կազմել է 60 աշխատանքային օր
	ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների տարեկան ջեռուցման օրերի թիվը	120	120		
	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1	1		
Վերջնական արդյունքի	Ապահովվել է համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցումը և հասանելիությունը, %	100	100		
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	32100.0	26323.0	-5777.0	Կորոնավիրուսի պատճառով <<ՆՈՒՀ>>-ի երեխաները հաճախել են ոչ լիարժեք,իսկ աշխատակիցները վարձատրվել են աշխատավարձի 2/3-ով:

Ոլորտ 8. Կրթություն

**Ծրագիր 2. Քարինջի և Լորուտի մանկապարտեզի շենքի ջեռուցման համակարգի անցկացում
Բնակավայրը՝ Քարինջ**

Արդյունքային ցուցանիշները		2022 թ.,			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. Արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն ն
Մուտքային	ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի աշխատակազմ	13	13		
Ելքային (քանակական) Ելքային (որակական)	ՆՈՒՀ ՀՈԱԿ հաճախող երեխաների թիվը	41	31	-10	Կորոնավիրուսի պատճառով <<ՆՈՒՀ>>-ի երեխաները հաճախել են ոչ լիարժեք
	ՆՈՒՀ ՀՈԱԿ հաճախող երեխաների աճը (%-ով)	2	0	-2	Կորոնավիրուսի պատճառով ՆՈՒՀ ՀՈԱԿ հաճախող երեխաների աճ չի գրանցվել
	Մեկ երեխայի հաշվով ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի պահպանման փաստացի ծախսերի գումարը, հազ.դրամ	38.5	59,0	+20,5	Կորոնավիրուսի պատճառով <<ՆՈՒՀ>>-ի երեխաները հաճախել են ոչ լիարժեք,իսկ աշխատակիցները վարձատրվել են աշխատավարձի 2/3-ով:
	Բարձրացել է ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի գործունեությունից, մատուցվող ծառայությունների մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը, (%)	85	85		
Ելքային (ժամկետայնություն)	Ծնողների կարծիքը մատուցվող ծառայությունների վերաբերյալ	լավ	լավ		
	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1	1		
Վերջնական արդյունքի	Ապահովվել է Քարինջ և Լորուտ գյուղերի բնակչությանը նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցման որակը, %	100	100		
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	3400.0	3150.8	-250.0	<<ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ների գազաֆիկացման

					աշխատանքների կատարման արդյունքում տնտեսվել է 250.0հազ.դրամ
--	--	--	--	--	--

Ոլորտ 8. Կրթություն

Ծրագիր 3. Համայնքում արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում Բնակավայրը՝ Թումանյան

Արդյունքային ցուցանիշները		2022 թ.			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի աշխատակազմ	5	6	+1	Ավելացել է դաշնամուրի դասատուի 1 հաստիք
	«Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի շենք և գույք	ըստ գույքագրման ցուցակի	ըստ գույքագրման ցուցակի		
Ելքային (քանակական)	ՀՈԱԿ-ի խմբերի թիվը	2	2		
	ՀՈԱԿ հաճախող երեխաների թիվը	26	32	+6	Ավելացել է հաճախող երեխաների թիվը
	Երաժշտական կրթություն ստացողների թիվը	12	18	+6	Ավելացել է դաշնամուր հաճախող երեխաների թիվը
	Գեղագիտական կրթություն ստացողների թիվը	14	14		
Ելքային (որակական)	Ծնողների կարծիքը մատուցվող ծառայության վերաբերյալ	6 - ավելի շատ լավ, քան վատ	6 - ավելի շատ լավ, քան վատ		
Ելքային (ժամկետայնության)	Ծառայության մատուցման օրերի թիվը տարվա ընթացքում	190	189		
	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1	1		
Վերջնական արդյունքի	«Թումանյան քաղաքի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի գործունեությամբ ապահովվել է համայնքի բնակչությանը արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցումը և	100	100		

	հասանելիությունը, %				
Ծախսեր, հազ. դրամ	ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	6200.0	6180.0	-20.0	Տարվա վերջին մնացել է 20,0 հազ. դրամ մնացորդ

Ոլորտ 9. Հանգիստ, Մշակույթ, Կրթություն

Ծրագիր 1. Ահնիձոր բնակավայրի ակումբի վերանորոգում /տանիք, դուռ և պատուհան/ Բնակավայր՝ Ահնիձոր

Արդյունքային ցուցանիշներ		2022թ.			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեք	Փաստ. արժեք	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Համայնքում մշակույթի տների և ակումբների քանակը	3			Համայնքի ավագանու լուծարման պատճառով համայնքի բյուջեում չի կատարվել համապատասխան փոփոխություն, որի պատճառով չի կատարվել ակումբի վերանորոգման աշխատանքները:
Ելքային (քանակական)	Վերանորոգված տանիքի մակերեսը, քմ	120			
Ելքային (որակական)	Փոխված դուռ և պատուհանների քանակը, հատ	2 8			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1			
Վերջնական արդյունքի	Բնակչության շրջանում մշակույթի նկատմամբ հետաքրքրվածության բարձրացում (%-ով)	55			
Ծախսեր, հազ. դրամ	ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	2000.0			

Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Ծրագիր 1. Խաղահրապարակների կառուցում Բնակավայրերը՝ ք.Թումանյան, գ.Քարինջ, գ.Մարց, գ.Լորուտ, գ.Ահնիձոր, գ.Շամուտ, գ.Աթան

Արդյունքային ցուցանիշները		2022թ.			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն

Մուտքային	Աշխատակազմում ծրագրի իրականացման հարցերով զբաղվող մասնագետների թիվը	2			Դոնոր կազմակերպությունների բացակայության պատճառով չի իրականացվել խաղահրապարակների կառուցման աշխատանքները:
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի թիվը	1			
Ելքային (քանակական)	Համայնքիում գոյություն ունեցող խաղահրապարակների թիվը	1			
	Կառուցված խաղահրապարակների թիվը	7			
Ելքային (որակական)	Բնակիչների կարծիքը տեղադրված խաղահրապարակների վերաբերյալ՝ 1-10 բալանոց սանդղակով	7-բալականին լավ			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1			
Վերջնական արդյունքի	Ապահովվել է բոլոր բնակավայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու ծառայությունների մատուցման հասանելիությունը՝ 1-10 բալանոց սանդղակով	7-բալականին լավ			
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջե և դոնոր կազմակերպություններ	7000.0			

Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն

Ծրագիր 1. Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին Բնակավայրերը՝ Թումանյան, Լորուտ, Քարինջ, Աթան, Ահնիձոր, Մարց, Շամուտ

Արդյունքային ցուցանիշները		2022 թ.,			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Սոցիալական աջակցության հարցերով զբաղվող աշխատակիցներ	1	1		
Ելքային	Սոցիալական աջակցություն	85	32	-53	Դրամական օգնություն է

(քանակական)	ստացած սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը				հատկացվել 18 սոցիալապես անապահով, 3 զոհված ազատամարտիկի և 11 ժամկետային զին. ծառայության մեջ գտնվողների ընտանիքներին
	դիմումների քանակը ներկայացրածների թիվը	117	32	-85	Ստացվել է սոցիալական աջակցություն ստանալու 32 դիմում
	Սոցիալական աջակցություն ստացած հաշմանդամների թիվը	8	0	-8	Հաշմանդամների կողմից օգնություն ստանալու դիմում չի եղել
Ելքային (որակական)	Բնակչության կարծիքը սոցիալական աջակցության ծառայության մատուցման հասցեականության մասին	բավարար	բավարար		
Ելքային (ժամկետայնություն)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1	1		
Վերջնական արդյունքի	Բարելավվել է սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և ծառայության մատչելիությունը, %	90	90		
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	2000.0	2000,0		

Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն					
Ծրագիր 1. Համայնքի բոլոր բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում					
Բնակավայրերը՝ Թումանյան, Լորուտ, Քարինջ, Մարց, Շամուտ, Աթան, Ահնիձոր, Չկալով, Դսեղ					
Արդյունքային ցուցանիշները			2022 թ.,		
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	«Թումանյանի կոմունալ տնտեսություն»	16	16		

	ՀՈԱԿ-ի աշխատակազմ				
	«Թումանյանի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի գույք և մեքենասարքավորումներ	ըստ գույքագրման և ցուցակի	ըստ գույքագրման և ցուցակի		
	Աղբահանության համար գանձված վճարների գումարը, հազ.դրամ	2800.0	3850,0	1050,0	Ավելացել է իրավաբանական անձանց մատուցվող աղբահանության ծառայությունների հաճախականության և քանակը
Ելքային (քանակական)	Աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը	2	2		
	Աղբատար մեքենաների թիվը	2	2		
	Աղբամանների թիվը	85	85		
	Աղբահանության համար գանձվող վճարի չափը, դրամ	100	100		
	Համայնքում իրականացված աղբահանության ծավալը՝ տարեկան կտրվածքով, տոննա	178.0	180	+2	Ավելացել է համայնքում իրականացված աղբահանության ծավալը
Ելքային (որակական)	Բնակիչների կարծիքը աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության վերաբերյալ	5 – միջին՝ ոչ լավ, ոչ վատ	5 – միջին՝ ոչ լավ, ոչ վատ		
	Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, սահմանված նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին	ամբողջությամբ	ամբողջությամբ		
Ելքային (ժամկետայնության)	Աղբահանության ծառայության մատուցման հաճախականությունը (ամսվա կտրվածքով) -բնակավայրերում	3անգամ 8անգամ	3անգամ 8անգամ		

	-բ.Թումանյան				
	Սանիտարական մաքրման ծառայության մատուցման հաճախականությունը (ամսվա կտրվածքով)	Ըստ գրաֆիկ-ժամանակացույցի	Ըստ գրաֆիկ-ժամանակացույցի		
Վերջնական արդյունքի	Ապահովվել է համայնքի բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը համայնքի բոլոր բնակավայրերում, %	100%	100%	-	
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	6200.0	6700,0	+500,0	Փոխանցվել է Ալավերդի համայնքին որպես աղբավայրի օգտագործման վարձավճար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 79-Ա

ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի 2023-2025թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի վարչական և ֆոնդային մասերի եկամուտների տարեկան մուտքերի հավաքագրումը՝ ըստ դրանց գանձման (ապահովման) համար պատասխանատու ստորաբաժանումների նախագծերը՝ համաձայն հավելվածի:

ՈՐՈՐՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՐՄԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 80-Ա

**<<ԴՍԵՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>>
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել <<Դսեղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ռոման Շաքարյանին՝ <<Դսեղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն կանոնադրությունը ներկայացնել Պետական ռեգիստրի տարածքային բաժին՝ գրանցելու համար:
3. Ս/թ նոյեմբերի 1-ից դադարեցնել <<Դսեղ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն գործունեությունը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդ օրը:

*ՈՐՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԴՄԵՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ք.ԹՈՒՄԱՆՅԱՆ 2022թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Դմեղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ հաստատություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող,

իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված՝ իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

2. «Դսեղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվել է «Դսեղի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության /գրանցման համարը՝ 96.210.00929, 25.07.2003թ./ վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:
3. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
4. Հաստատության գտնվելու վայրն 1718 Հակաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 13 փողոց, 6 շենք:
5. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
6. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության գինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
7. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
8. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
9. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
10. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:
11. Հաստա
տության անվանումն է. «Դսեղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:
13. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
14. Հաստատությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելը և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների ու հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:
15. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
16. Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության ու առողջության պահպանման համար:
17. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

18. Հաստատության երեխաների համակազմի համալրման կարգն ու խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:
19. Հաստատություն ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:
20. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Հաստատությունը կարող է մշակել և նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:
21. Հաստատություններն իրենց գործունեության ուղղություններին համապատասխան բաժանվում են հետևյալ տեսակների՝
 - ա) մանկապարտեզ, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովում է երեխաների խնամքը.
 - բ) հատուկ մանկապարտեզ՝ երեխաների ֆիզիկական և հոգեկան զարգացման շեղումների շտկման ծրագրերի գերակայությամբ.
 - գ) առողջարանային մանկապարտեզ՝ սանիտարահիգիենիկ, կանխարգելիչ և առողջապահական ծրագրերի գերակայությամբ.
 - դ) մանկական կենտրոն, որն իրականացնում է միայն նախադպրոցական կրթական ծրագրեր և խորհրդատվական ծառայություններ.
 - ե) համալիր մանկապարտեզ, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական հաստատությունների մի քանի տեսակներ կամ խմբեր.
 - զ) կրթահամալիր, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական և այլ մակարդակի կրթական ծրագրեր իրականացնող մի քանի հաստատություններ.
 - է) մանկատուն, որն իրականացնում է ծնողազուրկ, ծնողական խնամքից զուրկ, սոցիալապես անապահով, անբարենպաստ ընտանիքների մինչև 6,5 տարեկան երեխաների խնամքը, դաստիարակությունը և ուսուցումը:
22. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:
23. Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստատության հաստիքային բժշկական աշխատողների միջոցով, որոնք հաստատության տնօրինության հետ պատասխանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:
24. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

25. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:
26. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանն ու այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:
27. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

28. Երեխայի և հաստատության աշխատողների փոփոխարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:
29. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:
30. Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքները և արտոնությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:
31. Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

Y. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

32. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):
33. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
34. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
- ա) ավագանու համաձայնությամբ՝ հաստատության հիմնադրումը.
 - բ) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.
 - գ) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.
 - դ) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
 - ե) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.
 - զ) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.
 - է) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
 - ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
35. Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
36. Համայնքի ղեկավարը՝
- ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
 - բ) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.
 - գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.
 - դ) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.
 - ե) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.
 - զ) համայնքի ավագանու որոշմամբ՝ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
 - է) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.
 - ը) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ:
37. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:
38. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի

որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

39. Տնօրենը՝

- ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.
- բ) սահմանում է հաստատության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.
- գ) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.
- դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
- ե) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
- զ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
- է) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
- ը) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.
- թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.
- ժա) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
- ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.
- ժգ) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.
- ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

40. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

41. Դաստիարակը՝

- ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.
- բ) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.
- գ) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:
- դ) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.
- ե) ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների ու մեթոդական հանձնարարականների կատարումը.
- զ) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.
- է) կազմակերպում է մանկապարտեզի մեթոդկաբինետի աշխատանքը.
- ը) ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.
- թ) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.

42. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

- ա) կազմակերպում է մանկապարտեզի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումը և պահպանությունը.
- բ) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
- գ) հետևում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
- դ) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅԸԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

43. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

44. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

45. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

46. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

47. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:

48. Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

49. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

50. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

51. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

52. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

53. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VII. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգ

ՆԱԽԱԳԻԾ 81-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՎԱՐՔԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը և Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հունիսի 7-ի «Թումանյան համայնքի էթիկայի և վարքի կոնոնները սահմանելու մասին» թիվ 45-Ա որոշումը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Թումանյան համայնքի էթիկայի և վարքի հանձնաժողովի կազմը.
- 1/ Հանձնաժողովի նախագահ-Սուրեն Վաչագանի Թումանյան – Թումանյան համայնքի ղեկավար,
- 2/ -----//----- քարտուղար- Ռուզաննա Շահվերդյան– Թումանյան համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,
- 3/ -----//----- անդամ- Ռոման Շաքարյան– Թումանյան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,
- 4/-----//----- --//-- Հրանուշ Վանյան –Թումանյան համայնքի ավագանու անդամ,
- 5/-----//----- --//-- Գառնիկ Հովսեփյան- Թումանյան համայնքի Դսեղ բնակավայրի վարչական ղեկավար,
- 6/-----//----- --//-- Արմեն Չոփուրյան –Թումանյան համայնքի ղեկավարի օգնական,
- 7/-----//----- --//-- Արփինե Խաչատրյան – Թումանյան համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ:

*ՈՐՈՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՌՈՒՋԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 82-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 31-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թի 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 07.09.2022թ. թիվ 120 դրական եզրակացությունը՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում «Բարձրից» ՍՊ ընկերությունը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերից 06-035-0130-0005 ծածկագրի 0.4535 հա վարելահողը փոխադրելու բնակավայրերի հողերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության:

2. Առաջարկել «Բարձրից» ՍՊԸ-ին համայնքային բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով նշված հողամասի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 1 286 126 (մեկ միլիոն երկու հարյուր ութանասունվեց հազար հարյուր քսանվեց) ՀՀ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

ՈՐՈՌՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍԵՑ
ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 83-Ա

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և 5-րդ բաժնի պահանջներով՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-045-01175-0012 ծածկագրի 0,18278 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքը, մեկնարկային գինը սահմանել՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%-ի չափով:

3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրից:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՌՈՒՋԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 84-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԹԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՓՈՍՏԱՅԻՆ
ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի Աթան բնակավայրի 1713 դասիչով փոստային կապի ծառայությունները կազմակերպելու, բնակչությանը պատշաճ կերպով սպասարկելու համար համայնքային սեփականություն հանդիսացող՝ ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գյուղ Աթան, 1-ին փողոց, շենք 1 հասցեում ժամանակավոր տրամադրել տարածք, մակերեսի չափը՝ 9 քմ, «Հայֆոստ» ՓԲԸ-ի աշխատանքները կազմակերպելու համար:

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՌՈՒԶԱՆՆԱՇԱՀՎԵՐԴՅԱՆ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 85-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՆԱՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, Թումանյան համայնքի ավագանու կանոնակարգի 5-րդ գլխի 49-րդ 50-րդ և 51-րդ կետերով՝

Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու նստաշրջանի օրը որոշել 2022 թվականի նոյեմբերի 29-ը, ժամը 11:00 :

ՈՐՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ

ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ